ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԿՅԱՆՔԻ ՀԱՂԲԱՏՅԱՆ ՇՐՋԱՆԻ ՄԱՍԻՆ

Շ. Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«Պատմա-բանասիրական հանդես»-ի 1969 թ. № 3-ում բանասեր Պ. Հակոբյանը հրապարակել է մի հոդված «Սայաթ-Նովայի՝ Հաղբատի վանքում լինելու հարցի շուրջը» վերտառությամբ, որում փորձում է ապացուցել, թե «բացառությամբ մի վեցամյա շրջանի», Սայաթ-Նովան չի եղել և չէր կարող լինել Հաղբատում, որովհետև սկսած 1740-ական թվականներից ընդհուպ մինչև դարավերջը Հաղբատի վանքը անմարդաբնակ է եղել, դատարկ ու ավեր։

Հայտնի է, որ մասնագետներից ոչ մեկը անվերապահորեն չի պնդել Սայաթ-Նովայի հաղբատաբնակ լինելը։ Ախվերդյանն անգամ, որ այդ տեսության հիմնադիրն է, թիկանորեն էր խոսում այդ մասին։

Ժողովրդական ավանդություններից և այն մեն մի հատիկ Երկտողից դ։ տ. թե՝

Հաղբատու լուսարար Սայաթ-Նովեն իմ,
Մե կանթեղիս վառելու ձեթ չունիմ.

տողեր, որոնց Սայաթ-Նովային պատկանելն անգամ ավանդաբար է մեզ հասել, այլ իրեղեն ապացույցներ չունենք Սայաթ-Նովայի Հաղբատի վանքում եղած լինելու վերաբերյալ։

Ճիշտ է, բանաստեղծի մայրը սանահնեցի էր, Կախի վանքում պաշտոնավարելուց ու իր կողակցին կորցնելուց հետո կյանքից, մարդկանցից «բեզարած» աշուղի համար հարմար կլիներ Հաղբատի մենաստանը, բայց առայժմ չկան և այլևս հազիվ թե գտնվեն այդ բանը հաստատող ուղղակի վկայություններ։

Սայաթ-Նովայի կյանքի հաղբատյան շրջանն, այսպիսով, ոչ թե իսկություն. այլ խիստ հավանական, աշմարտությանը մոտեցող ենթադրություն է։ Այստեղից էլ՝ Սայաթ-Նովային նվիրված գեղարվեստական ստեղծագործություններում (վեպ, կինոսցենար, լիբրետտո), ինչպես և հասարակական լայն շրջաններում տարածում գտած տեսակետը Սայաթ-Նովայի կյանքի հաղբատյան շրջանի վերաբերյալ։

Խ. Աբովյանի կենսագրության ուսումնասիրության առիթով կատարած բանասիրական որոնումների ընթացքում Պ. Հակոբյանը ծանոթանում է հանգուցյալ բանասեր Համազասպ Ոսկյանի՝ տարիներ առաջ հրատարակված «Պատմութիւն հռչակաւոր վանից Հաղբատայ Ս. Նշանին» գրքին և, ամենևին հաշվի չնստելով վերոհիշյալի հետ, Սայաթ-Նովային նախ անվերապահ հաղբատաբնակ է համարում և ապա ձեռնամուխ լինում դրա հերքմանը։ Մինչդեռ ապացուցելուց առաջ, թե նա չի եղել Հաղբատում, պետք է ապացուցել եղած լինելը. որ. ինչպես ասացինք, միայն հավանական ենթադրություն է։ Ինչ վերաբերում է հերքմանը, այնքան թույլ և այնքան խախուտ են Պ. Հակոբյանի

փաստաթղթերը, որ դրանց հերքման համար առանձին ջանք գործադրելու հարկ չկար։

Պ. Հակոբյանը գրում է. «Բաղմավաստակ Ախվերդյանից սկսած մինչև բանասեր-պատմաբան Մորուս Հասրաթյանը և ավելի նորերը, շուրջ 120 տարի, գրել ու պնդել են, թե Սայաթ-Նովայի կյանքի վերջին քսանհինգ տարիներն անցել են Հաղբատի վանքում, արհեղյական սքեմի տակ, հավատացել ու կրկնել են, թե Սայաթ-Նովան եղել է Հաղբատի վանքի լուսարարը և այլն» (էջ 209)։ Նրա կարծիքով «Ղրիմեցու գիրքը բոլորովին ուրիշ բան է ասում Հաղբատի հենց այդ քսանհինգ տարիների իրավիճակի մասին։ Պարզվում է, որ 1740-ական թթ. սկսած, ընդհուպ մինչև դարավերջ, բացառությամբ մի վեցամյա շրջանի, Հաղբատի վանքը անմարդաբնակ է եղել, դատարկ ու ավեր, այնքան, որ պատերի վրա խոտերն թփեր են աճել։ Իսկ մի վանքում, որի կամարների տակ ոչ միայն եկեղեցական արարողություն չի կատարվել, այլև մարդ-էակ իսկ չի շարժվել, անհնար բան է, որ քսանհինգ տարի շարունակ Սայաթ-Նովան լուսարարություն աներ» (էջ 209—210)։

Արդ տեսնենք, թե ի՞նչ կռվաններ ունի Պ. Հակոբյանը։ Ինչպե՞ս է նա ապասուցում նախ՝ Հաղբատի ավեր ու անմարդաբնակ լինելը և ապա՝ նույն այդ պատճառով Սայաթ-Նովայի Հաղբատում չլինելը։

Նա գրում է, որ իրեն այդ համոզման է բերել Հովհաննես Ղրիմեցու[1] աշխատությունը։ «Գրքի ընթերցանությունը թեպետ այդ առումով ոչինչ չտվեց,— գրում է Հակոբյանը,— բայց ընձեռեց մի քանի անուղղակի վկայություններ, որոնք, կարծում ենք, բանալի են տալիս լուծելու Սայաթ-Նովայի կենսագրության հաղբատյան առեղծվածը» (էջ 209)։ Ու անցնում է առեղծվածի «լուծմանը»։ Հիշատակում է Հովհ. Ղրիմեցու վկայությունն այն մասին, որ Նադիր-շահի սպանությունից հետո (որը տեղի է ունեցել, ի միջի այլոց, ոչ թե 1749 թ., ինչպես նշում է Պ. Հակոբյանը, այլ՝ 1747 թ.) Հաղբատի գլխին բաղում փորձություններ եկան հատկապես լեզգիների սփռած ասպատակությունների հետևանքով։

Իսկապես որ, Նադիր-շահի մահվանից հետո Կովկասը ալեկոծումների մեջ էր, և ամեն տարի, իսկ երբեմն էլ տարին մեկ-երկու անգամ կրկնվող թուրք հրոսակների ու լեզգիների արշավանքները խանգարել էին ժողովրդի անդորրը։ Չի կարելի չհավատալ Ղրիմեցուն, և նա իրոք նշում է, որ Հաղբատի երեք առաջնորդները՝ Գրիգորը, Զաքարիան և Ռեթեոսը շուրջ 30 տարի, հարկադրված, Հաղբատից տեղափոխվել ու նստում էին Թիֆլիսում։

Այո, բայց ե՞րբ՝ 1747—1777 թթ.։ Իսկ մեր ինչին են պետք այս թվականները։ Չէ՞ որ ըստ ավանդության Սայաթ-Նովան Հաղբատում եղել է դրանից հետո՝ 1770—1795 թթ. մեջ։ Ընդ որում, ասենք, որ այս թվականներն էլ, մանավանդ առաջինը՝ 1770, կայուն չէ։ Ոչ ոք մինչև օրս հիմնորեն չի զբաղվել այս հարցով։ Հրապարակի վրա են Դ. Ախվերդյանի և Մ. Հասրաթյանի կարծիքները։ «Սայաթ-Նովայի վանական կյանքի վրա չունիմ ոչինչ տեղեկություն»,— գրում է Ախվերդյանը գրքի առաջաբանում, իսկ ավելի կոնկրետ ասում է. «Երբեք չենք կարող հաշվել Սայաթ-Նովու կրոնավորվելն էս ժամանակից առաջ (նկատի ունի կնոջ մահվան թվականը՝ 1768— Շ. Գ.). թե մի եր-

1 «Յովհաննու Ղրիմեցւոյ Պատմութիւն հռչակաւոր վանից Հաղբատայ Ս. Նշանին», Վիեննա, 1965։

կու տարի էլ հետ գնենք ու ընդունենք 1770-ն, հայնժամ մեր երգիչն կրոնավորվելիս էլել պիտի ըլի 58 տարեկան»։ Նույնն է ասում և Մ. Հասրաթյանը. «Կնոջ մահից մի քանի տարի հետո, երևի 1770-ական թվականներին, Սայաթ-Նովա տեր-Ստեփանոս քահանային վանականի (վարդապետի) աստիճան են շնորհում և փոխադրում իր հայրենի Հաղբատի վանքը...»[2]։ Այս բոլորը ենթադրություններ են՝ այն էլ մոտավոր։

Հայտնին և հավաստին այն է միայն, որ կնոջ մահվանից հետո չգիտենք, թե ինչ է եղել Սայաթ-Նովան։

Մեր կարծիքով Իոհան Բագրատիոնի «Կալմասոբայում» հիշատակված Խելաշվիլու և Սայաթ-Նովայի հանդիպումը ավելի հավանական, մինչև իսկ ճշմարտության է մոտեցնում այդ ենթադրությունը։ Այս մասին ավելի հանգամանորեն՝ քիչ հետո։

Պատմական այն շրջանը, որ Հ. Ղրիմեցու վրա հենվելով փորձում է մերժել Պ. Հակոբյանը, կրկնում ենք, ո՛չ մի կապ չունի Սայաթ-Նովայի Հաղբատում եղած միջոցի հետ և այդ մասին պետք է խոսել որպես անկախ իրողության։ տեսնելու համար դեռ իսկապես ճշմարտությո՞ւն է դա, թե մեր պատմիչին և աշխարհի բոլոր պատմիչներին հատուկ չափազանցություն կամ գույների թանձրացում։

Հաղբատը, առավել ևս Հաղբատավանքը, նույնիսկ նախասայաթնովյան շրջանում այնպես կործանված ու ամայի չի եղել, ինչպես Պ. Հակոբյանն է կարծում։ Հնարավոր է, իհարկե, որ լեզգիների անընդմեջ հարձակումների հետևանքով Հաղբատի առաջնորդները հիշյալ 30 տարիների ընթացքում (1747—1777 թթ.) հարկադրված լինեին Թիֆլիսում նստելու, ուր նրանք կարող էին լինել ու լինում էին ցանկացած ժամանակ, անկախ երկրի քաղաքական վիճակից։ Չէ՞ որ թեմը կոչվում էր Հաղբատի և Թիֆլիսի թեմ. առաջնորդներն էլ ուր կամենում, այնտեղ նստում էին։ Բայց առաջնորդների Թիֆլիս տեղափոխվելը Հաղբատավանքի գործունեության վրա չէր կարող ազդել, ինչպես որ լեզգիների ձեռքից տնավեր եղած հաղբատցիների փախուստը, որ կարող էր ամիսներ տևել, իսկ որոշ դեպքում նաև մեկ-երկու տարի, չի նշանակում, թե գյուղը կործանվել էր։

Թուրքերը և լեզգիները սրընթաց գալիս անցնում էին՝ ճանապարհին պատահածը թալանելով, հազվագյուտ դեպքում հաստատվելով որոշ տեղերում մեկ-երկու օրով կամ շաբաթով։ Ի՞նչ հարկ ունեին նրանք և ինչպե՞ս կարող էին և նաև ի՞նչ միջոցներով քանդելու գյուղերն այնպես, որ այլևս այնտեղ մարդիկ բնակվել չկարողանային։

Եվ այդ ի՞նչ նպատակով պիտի արվեր, և ե՞րբ է նման բան արվել առհասարակ։ «Թուրքերը, միանալով լեզգիների հետ,— գրում է Ն. Դուբրովինը,— 300-ից մինչև 700 հոգիանոց խմբերով ասպատակություններ էին անում Քուռ գետի երկու ափերի շրջանում, հափշտակում էին անասունները, կողոպտում բնակիչների ունեցվածքը և գերեվարում նրանց»[3]։ Նրանց նպատակն էր սնանկացնել Վրաստանը, թույլ չտալ, որ նա ապավեն դառնա Ռուսաստանին՝ Կով-

2 «Սայաթ-Նովա, Հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժողովածու», Երևան, 1963, Առաջարան, էջ 33։

3 Н. Дубровин, История войны и владычества русских на Кавказе, том. II СПб, 1886, էջ 144։

կասը նվաճելու համար։ Ավելին, Օմարը հայտարարում էր, թե նա պատրաստ է հաշտություն կնքելու Հերակլի հետ, «եթե Հերակլը փոխի իր վերաբերմունքը նրա նկատմամբ»։ Օմարն իհարկե ստում էր։ Հերակլին ուղղած մի նամակում լեզգիների առաջնորդը գրում էր. «Մենք ապրում ենք Դաղստանում, այս երկրի ուժը ձեզ բավական հայտնի է, և մենք զորքերով Վրաստան ենք մտել, որպեսզի կռվենք, ավար ձեռք բերենք և ոչ թե բազմապատկենք մեր փառքը»[4]։ Լոռվա բերդի և Վախանի ամրոցի գրավման համար Օմարն, այո, ահագին վառոդ փչացրեց, որովհետև բերդերում ամրացած բնակչությունը համառ դիմադրություն էր ցույց տալիս։

Հաղբատավանքում լեզգիներին հետաքրքրելու էր նյութական հարստությունը։ Ինչպես քիչ հետո կտեսնենք, վանքի գրավման ժամանակ նրանք անգամ ձեռք չէին տվել մատենադարանի ձեռագրերին։ Միանգամայն ավելորդ պիտի լիներ հրանոթի փողն ուղղել վանքի կողմը և այնքան դժվարությամբ ձեռք բերած վառոդը ծախսել էֆեկտի համար։ Ոչ էլ կարիք կար մարդկանց տները բարուբանդ անել։ Այդ իրենք, բնակիչներն էին, որ լեզգիների հարձակման լուրն առնելով, թողնում էին տուն-տեղ ու փախչում լեռները։ Դյուղը մնում էր անտեր մեկ-երկու օրով, իսկ երբեմն էլ՝ շաբաթներով ու ամիսներով, բայց ոչ ավելի։ Եթե լինում էին քոչողներ էլ, ապա մեկ-երկու, տասը-քսան ընտանիք, ինչպես միշտ նման բաներ կարող էին լինել՝ դարձյալ անկախ երկրի քաղաքական վիճակից։

Որ հիշյալ 20 տարիների մեջ Հաղբատն իրոք բնակելի է եղել, կյանքը չի գադարել այնտեղ, ցույց են տալիս, ի վերջո, հետևյալ փաստերը։

Ամենից առաջ կա իրեղեն ապացույց։ Պ. Հակոբյանը գրում է։ «1740-ական թվականներից սկսած, ընդհուպ մինչև դարավերջ... Հաղբատի վանքը անմարդաբնակ է եղել, դատարկ ու ավեր...», մինչդեռ 1751 թ., այսինքն՝ 40-ական թթ. մի ողջ տասնամյակ հետո, Հաղբատի Ս. Նշան մայր եկեղեցու դանգակատան մոտ՝ հյուսիս-արևելյան պատի տակ, հաղբատցիք ամփոփում են շնողցի Պետրոս վարդապետի աճյունը ու վրան, հավանաբար մեկ-երկու տարի հետո (ինչպես սովորաբար լինում է) դնում են այն տապանաքարը, որի լուսանկարը կարելի է գտնել Կ. Ղաֆադարյանի «Հաղբատ» ուսումնասիրության 256-րդ էջում, իսկ բուն շիրմաքարը՝ տեղում՝ վրան փորագրված «Թվին ՌՄ»։ Ինչպես գիտենք, Հաղբատը գտնվում է բարձր ու անառիկ սարերի վրա, ուր հիմա ավտոմեքենան ոլորապտույտ բարձրանում է հազիվ կես ժամում։ Մերձակա գյուղեր չկան։ Ո՞վ, ինչպե՞ս ու ինչո՞ւ իր մեռելը պիտի բերեր այստեղ թաղելու, և ո՞վ պիտի տաշեր որձաքարից պատրաստած այն մահարձանը, որի վրա այժմ կարդում ենք՝

Արձան։ այս Պետրոս վարդապետի,
Սա յորջորջի Սարգսի որդի,
Ի գիւղն բնիկ Շինողեցի։
Ի բազում ամ աստ ջանացի
Եւ կիմ տապանս այսր եդի,
Եւ որ դիպիր, տուք ողորմի,
Թվին հայոց երկհարիւրի։

---

4 Նույն տեղում, էջ 149։

«Ի բազում ամ աստ չանացի»՝ ասված է հանգուցյալի մասին։ Պետրոս վարդապետը Հաղբատի միաբաններից է և «բազում ամ» աշխատել է վանքում, վախճանվել ու թաղվել եկեղեցու գավթում։

Ցավոք, միայն եզակի ու խիստ արժանավոր անհատների շիրմաքարերն են արձանագրությամբ առանձնանում։ Կան շատ տապանաքարեր, որ հիշատակություն չունեն և շատ գերեզմաններ, որ շիրմաքար չունեն։ Այլապես մեկի փոխարեն մենք մի շարք շիրմաքարեր կարող էինք հիշատակել, ինչպես որ կարող էր այս մեկն էլ չլինել։ Չլիներն, իհարկե, չէր կարող նշանակել, թե կյանքը դադարել էր Հաղբատում, այն էլ Հաղբատում՝ Գուդարքի ամենանշանավոր հոգևոր կենտրոնում։

Հերակլը հինգ անգամ (1749, 1751, 1765, 1768—69 և 1779 թթ.) Հայաստանում լինելով, 1769 թ. Երևանի Հուսեին խանի վրա արշավելիս, այցելել է Հաղբատ։

Ալեքսանդր Երիցյանը 1873 թ. «Кавказская старина» հանդեսի № 3-ում տպագրած «Ахпатскій монастырь» հոդվածաշարում խոսելով նույն այդ շրջանում լեզգիների կատարած ավերածությունների մասին և նկատելով, որ այդ արշավանքների հետևանքով ամենից ավելի տուժել էր Հաղբատը, գրում է. «Լեզգիների անընդմեջ հարձակումները բոլորովին քայքայել են Հաղբատ գյուղը, որը մի քանի տարի անմարդաբնակ լինելով. կրկին բնակեցվել է 1766 թ.։ 1769 թ. Հաղբատ է այցելել Հերակլ II արքան և հենց այստեղից էլ արշավանքի է դուրս եկել Երևանի Հուսեին Ալի-խանի դեմ»[5] (ընդգծումը մերն է— Շ. Գ.)։ Դրանք հենց այն մի քանի տարիներն են, որոնց մասին ասում ենք, թե կարող էր անմարդաբնակ լինել Հաղբատը, բայց կա և հաջորդ տողը «կրկին բնակեցվել է 1766 թ.»։

Այլ կերպ լինել չէր կարող։ Անտառներում ու մոտակա այրերում թաքնված հաղբատցիք վերադառնում ու կրկին տեր էին դառնում իրենց տուն ու տեղին, կալ ու կուտին։ Եթե կրկին հարձակում էր լինում, նույն բանը կրկնվում էր և ժողովրդի հետ, որի հետևանքով հոգևոր առաջնորդները, որոշ ժամանակով Հաղբատում նստելու փոխարեն, տեղափոխվել էին Թիֆլիս։ Բայց տեղում անխափան գործում էր վանքը և նրա շրջակայքում ապրում էր հայ շինականը։

Պ. Հակոբյանը վատ է օգտվել քննարկվող շրջանի վերաբերյալ գոյություն ունեցող տպագիր և արխիվային նյութերից, չի թերթել անգամ հրապարակում եղած հանրահայտ աշխատությունները։ Մի՞թե նրան հայտնի չէ, որ Հովսեփ Էմինը, Հերակլի ժամանակակիցն ու գործակիցը լինելով, գրել ու մեզ է թողել իր գլխով անցած դեպքերը. մի ընդարձակածավալ ուսումնասիրություն, որ անգլերենից թարգմանվեց հայերեն և տպագրվեց Բեյրութում՝ 1958 թ.։

Իր աշխատության 14-րդ գլխում Էմինը խոսում է 1763 թ. Հաղբատի կողմերում լեզգիների դեմ մղած իր կռիվների ու քաջագործությունների մասին։ Ինչպես հայտնի է, Էմինն իր մասին պատմում է երրորդ դեմքով։ Նա գրում է. «Հունիսի ատենները Էմինը դիմեց իշխանին (խոսքը Հերակլի մասին է— Շ. Գ.) և խնդրեց անկե, որպեսզի իրեն շնորհե՝ հարյուր ձիու բեռ ալյուրի հետ միասին նաև... հրովարտակ մը։ Էմինի փափագն էր, որ իր նորագիր քսան և չորս զինվորներուն հետ երթան Հաղբատի թեմը, որ երկու օրվան ճամփա հեռու էր Թիֆլիսեն՝ դեպի հարավ-արևմուտք։ Այս շրջանի բնակիչները մասամբ

[5] „Кавказская старина", 1873, էջ 85։

առևանգված էին ասպատակողներն և մասամբ ալ դաղթած էին Կախեթ՝ իշխանի ժառանգական հայրենիքը ապրելու համար վանքին մեջ։ Լեզգիներն ընդհանրապես այս ամայի ու լեռնային երկրի մեջ է, որ կունենային իրենց ժամադրություններրը»[6]։

Եվ իրոք, Էմինը իր մարդկանց հետ մեկնում է նախ Պեյտար հայաբնակ գյուղը, որի մոտ անհավասար կռիվ է տալիս 52 լեզգիների հետ, հաղթում նրանց և հանապարհը շարունակում դեպի Հաղբատ։ Եվ միայն նույն թվականի դեկտեմբերին նա վերադառնում է Թիֆլիս՝ ջերմ ընդունելության արժանանալով Հերակլի կողմից։

Եթե 1740-ական թթ. ի վեր Հաղբատն անմարդաբնակ լիներ, ինչո՞ւ պետք է լեզգիները շարունակեին արշավել այս կողմերի վրա և ինչո՞ւ ինքը՝ Էմինը, պետք է գնար Հաղբատ։ Գուցե նա գնում էր ավերված ու գետնին հավասարված գյո՞ւղը պաշտպանելու թշնամիներից։ Չէ՞ որ նա պարզ ասում է՝ գնաց «Հաղբատի բնակչություն ունեցող շրջանը», որ նույնն է թե՝ գնաց «բնակելի, բնակչություն ունեցող Հաղբատ»։ Կասկածողները կարող են դիմել բնագրին, ուր պարզ գրված է՝ „to the inhabited bishopric of Haghpat", որ նշանակում է. «բնակելի, բնակված, բնակչություն ունեցող թեմը Հաղբատի»[7]։

Հաղբատ գյուղի և վանքի կործանված լինելը ապացուցելու համար հենց սկզբից Պ. Հակոբյանը մատնացույց է անում Ղրիմեցու մի վկայությունը՝ կապված զակամեցիներին Շուլավեր գյուղաքաղաքը փոխադրելու հետ, որ նա, ինչ-ինչ պատճառներով, կոչում է ուխտագնացություն։

1776 թ. Մխիթար Քալանթար հայկազուն իշխանը, պատմում է Ղրիմեցին, Զակամի գավառի բնակիչներին փոխադրում է Շուլավեր։ Մխիթարը 70 հոգուց բաղկացած իր խմբի հետ դուրս է գալիս շրջագայելու Շուլավերի մերձակա շրջանները, հասնում է մինչև պղնձահանքի մոտերը և բարձր լեռներից մեկի կատարին կանգնած, այս ու այն կողմ նայելիս, նկատում է Հայրբատի ու Սանահինի վանքերը, սքանչանում է («զարմացեալ միանգամայն») և լեռներից իջնելով, բարձրանում է նախ Հաղբատ ու մտնում Ս. Նշան եկեղեցին։ Հիանում է նրա հոյակապ ու խրթին կառուցվածքով։ Ապա նկատում է, որ այն անշուք և անտերունչ վիճակում է, կատարյալ անտերության է մատնված, այն աստիճան, որ խոտեր ու թփեր են աճել պատերի ու տանիքի վրա։ Իշխանն անմիջապես հրամայում է մաքրել եկեղեցին, պոկել խոտերն ու մացառները և ապա հրամայում է քահանաներին՝ օրհնել եկեղեցին։ Հաջորդ օրը պատարագ է անել տալիս Ս. Նշան եկեղեցում, ինչպես և բազում անասուններ մորթելով, մատաղ է անում. «զենեալ նաև զյոլով մատաղս առնէ նաւակատիս խնջոյից, և խրախութիւն ամենայն բազմութեանն մեծահաց հանդերձանօք»[8]։

Վերջին այս տողերը Պ. Հակոբյանը դուրս է թողել, զգալով հավանաբար, որ «ամենայն բազմութեանն մեծահաց հանդերձանօք» ասելով Ղրիմեցին նկատի ունի Հաղբատի բնակիչներին, որոնց անասուններն է, որ պիտի մորթվեին «մատաղի» ժամանակ։ Հենց այստեղ է, որ Պ. Հակոբյանին պետք է եղել զակամեցիներին ուխտավոր դարձնելը, որովհետև միայն ուխտավորները կա-

6 «Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները», Բեյրութ, 1958, էջ 251։
7 Տես „The Life and adventures of Joseph Emin", London, 1792, էջ 222։
8 «Յովհաննու Ղրիմեցւոյ Պատմութիւն...», էջ 121։

բող էին իրենց հետ անասուն բերել մատաղի համար։ Մխիթարը և իր մարդիկ ուխտավոր չէին, նրանք պարզապես շրջում էին տեղանքին ծանոթանալու համար և պիսվաձով Լոռան Հաղբատում։ Ինչ վերաբերում է վանքի անտերունչ վիճակին, որ իրոք, հետևանք պիտի լիներ լեզգիների ասպատակության և տեղի բնակիչների ու հոգևորականության անհոգության, ապա դա բնավ ապացույց չէ այն բանի, թե 1740-ական թթ. հետո վանքը կատարյալ ամայի ու ավեր է եղել։ Այդ բանի ապացույց չեն նաև քարերի ու տանիքի վրա բուսած խոտերն ու թփերը, որովհետև խոտեր ու թփեր բուսած կան մեր բոլոր հին շինությունների վրա, այդ թվում և էջմիածնի այժմ գործող մայր եկեղեցու, Հռիփսիմեի, Գեղարդի, Սևանի և շատ այլ վանքերի ու մատուռների տանիքներին։

Այս է իրողությունը և այս դեռ Հաղբատում՝ Սայաթ-Նովայի լինելուց առաջ։ Ինչ վերաբերում է Սայաթ-Նովայի ժամանակին, ապա դա ուղղակի զուգադիպում է Հաղբատի վերաշինության և հոգևոր գործունեության վերելքի շրջանին։

Դիմենք փաստերին։

Ինքը Ղրիմեցին մինչև 1776 թ. է համարում Հաղբատի ամայի ու ավերված լինելու շրջանը։ Ոչ ոք հավաստի չգիտե և չի պնդում ու չի կարող պնդել, թե Սայաթ-Նովան ավելի վաղ է եղել Հաղբատում։ 1770-ական թթ. ասելով սովորաբար հասկացվում է, ոչ միայն հիշտ՝ 1770, այլև՝ 72—73—75 թթ.։ Միանգամայն հնարավոր է, որ Սայաթ-Նովան Հաղբատում է եղել 1775—1776 թթ. հետո և ոչ թե հիշտ 1770 թ.։ «...ավելի հավանական է,— գրում է Մ. Հասրաթյանը,— որ Սայաթ-Նովան վարդապետ ձեռնադրված լինի 1775 թվականին՝ կնոջ մահվանից 7 տարի հետո»[9]։ Ուրեմն խոսքը երկու մոտավոր տասնյակ տարիների մասին է՝ 1770-ական թթ. հետո մինչև իր մահը։

1777 թ. Հաղբատի առաջնորդ դարձած Աբրահամ Թեքիրտաղցին (Թրակեցին) արդեն փոխադրվել ու նստում էր Հաղբատում. սա իրողություն է։ Հաղիվ թե ամայի ու անմարդաբնակ Հաղբատը, եթե մինչ այդ արդեն գյուղը վերաբնակեցված և նորմալ կյանքով շապրեր, կարողանար ոչ միայն կերակրել ու խնամք տանել առաջնորդարանի հոգևոր դասին, այլև սատար լինել այն մեծ շինարարությանը, որ սկսեց Աբրահամը իր գործունեության առաջին իսկ տարին։ Ղրիմեցին մեկ առ մեկ թվարկում է այդ. «...նախ տեսեալ զպակասութիւն բնակարանայ ի սմա՝ ձեռն ի գործ առնէ և շինէ զերկայարկ առաջնորդարան գեղեցիկ՝ ի հիւսիսկողմն նշխարատան՝ հարուստ մի բացագոյն՝ առ որմով հնագոյն սեղանատանն կամ ձիթահանքին... և զայլ սենեակս ինչ յայլ և այլ պէտս»[10]։ Ապա կցում է. «Ըստ որում պատմեն ականատես ծերունիք»։ Արդյոք հաշվի առնել է Պ. Հակոբյանը, թե ի՞նչ է նշանակում այս՝ «պատմեն ականատես ծերունիք» արտահայտությունը։ Հո չէի՞ն կարող ականատես ծերունիները սահինցի կամ մղարթեցի լինել։ Ուրեմն գյուղը կար, բնակիչները կային, որ Ղրիմեցու ժամանակ հասել էին օր ծերության։

Աբրահամին, երեք տարի հետ, 1780 թ. փոխարինում է Աղվանից Իսրայել կաթողիկոսը, որն իր առաջնորդության չորս տարիների ընթացքում «...նորոգեաց բովանդակ պտանիս կաթողիկէին սբ. Նշան աւագ եկեղեցոյ. կանգնեալ

---

9 Սայաթ-Նովա, Առաջարան, էջ XXXIV։

10 «Յովհաննու Ղրիմեցոյ Պատմութիւն...», էջ 122—123։

ի գագաթան նորա զխաչ մեծ, դեղատեսակ և ազնիւ. շինեաց և կաթողիկոսարան կամ առաջնորդարան գեղազարդ ի Հարաւոյ սբ. Նշան աւագ տաճարին և ի վերայ արտաքին պարսպի մենաստանիս և առ նովաւ սենեակս մեծամեծս և փոքունս հանդերձ նիրքնայարկօք» և այլն և այլն։ Եվ այս ամենը Հաղբատի ավերվա՞ծ ժամանակ։

Բայց շարունակենք փաստերի թվարկումը։

Սղանյանցի «Դիվանի» 11-րդ գրքում որոշակի ակնարկ կա Հաղբատի բնակչության մասին. թվականը՝ 1778։ Հովհաննես և Մարտիրոս անունով երկու հոգևորականներ նամակ են գրում Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսին այն մասին, որ Թելավում գործակալ չունեն և սանահնեցիք ու հաղբատցիք (պարզ ասված է՝ սանահնեցիք ու հաղբատցիք) «դավթել են» Թելավը, և որ հարկավոր է այնտեղ նշանակել սուրբ Աթոռի և Սանահնի գործակալ տեր-Սարգիս քահանային. «Իսկ և՝ Առաջնորդ Յովհաննէս, և նուիրակ Մարտիրոս վարդապետքն մէկ թուղթ էին գրեալ առ սրբազան վեհն, որք և խնդրեալ էին թէ՝ ի Թելաւ գործակալ ոչ գոյ մեզ, և Սանահնու ժողովրդոցն, և Հաղբատցիք զաւրեն, Կացո անդ սրբոյ...»[11] և այլն։ (Այստեղ և այսուհետև մեջբերումներում կատարված ընդգծումները մերն են— Շ. Գ.)։

Իսկ որ Հաղբատը բնակելի է եղել նաև 1780-ական թթ., երևում է Մ. Թաղիադյանի «Ճանապարհորդութիւն ի Հայս» աշխատության մեջ արձանագրված հենց այն փաստից, որ նշել է Պ. Հակոբյանը։

Գիտենք, որ Թաղիադյանն էլ այդ ժամանակ էր իրագործում իր հայտնի շրջագայությունը։ «Աստանօր, հրամանաւ Ներսիսի,— գրում է նա,— շրջեցի ի մերձակայ վանորայս և օրինակեցի զամենայն նախնի արձանագրութիւն աշխարհին, ի խաչքարս, ի վէմս ապառաժից. սկսեալ ի Գանձասարայ մինչև ի Հաղբատ և ի Սանահին»[12]։ Հաղբատում պատահում է մի այսպիսի ուշագրավ դեպք. «Զայսոսիկ ժամանակաւ (խոսքը 1822—1823 թվականների մասին է— Շ. Գ.) մեռաւ մի ի մերոցն՝ Մինաս վարդապետ Կարնիկ կոչեցեալ, և ի խնդիր լինել մեր զդագաղէ՝ թէ ի վանսն և թէ ի գեղջ՝ որ պարունակէր տունս իբրև 150, ոչ գտաք։ Եւ ի հարցանել մերում ցիրէց տեղւոյն Ստեփանոս, թէ «ապա զիա՞րդ թաղէր նա զմեռեալ իւր», պատասխանեաց թէ՝ «ահա քառասուն ամք են, զի քահանայեմ աստ, և ոչ ոք թաղեցի ի մեծամեծաց մինչ ի փոքրկունս»[13]։ Ուշագրավ է, որ գյուղն ունի 150 տուն և նրա «քառասնամյա» (քառասուն տարվա) քահանան իր պաշտոնին է 1780-ական թթ. ի վեր, ավելի ստույգ՝ 1783 թ.։ Այդ, թե՞ հաջորդ տարվանից է Պ. Հակոբյանը «հաշվում» Հաղբատի երկրորդ՝ լիակատար ավերումն։ Ավեր ու անմարդաբնակ գյուղում 40 տարի ինչպե՞ս կարող էր ապրել տեր-Մովսեսը, ո՞վ էր խնայելու նրան և ո՞ւմ էր սպասարկելու նա։ Մեզ թվում է, թե Հակոբյանը ուշի-ուշով չի թերթել իր ձեռքի տակ եղածը՝ Ղրիմեցու երկասիրությունն ու «Դիվանի» հատորները, ինչպես նաև ռուսերեն այն միակ աշխատությունը, որից օգտվել է։

Եթե իսկապես Հաղբատը բոլորովին ամայի ու անմարդաբնակ լիներ, հակիվ թե նույն այդ 1760-ական թթ. վերաբերյալ հնարավոր լինել դրել. «Հերակլ արքայն խնդրեաց ի սրբոյն Վեհէն տալ զԱռաջնորդական կոնդակ Զա-

11 «Դիվան հայոց պատմության», գիրք ԺԱ, Թիֆլիս, 1913, էջ 379։
12 Մ. Թաղիադյան, Ճանապարհորդութիւն ի Հայս, հատ. 1, Կալկաթա, 1847, էջ 332։
13 Նույն տեղում, էջ 334—335։

քարիա վարդապետին միայն ի վերայ Հաղբատայ թեմին»։ Այսինքն Թիֆլիսից անջատ, որպեսզի Թիֆլիսեցիք այլևս կախում չունենան Հաղբատից։ Վեհափառը, սակայն, մերժում է, ասելով, որ վանքն ի վիճակի չէ մի այլ առաջնորդ էլ կարգել Թիֆլիսի համար։ Եվ Զաքարիան մնում է առաջնորդ երկու տեղերի համար, վարելով միաժամանակ Սանահնի առաջնորդությունը երեք տարի ժամանակով՝ մինչև 1770 թ.[14]։

Հաղբատի և Սանահնի վանքերի՝ 1780-ական թթ. շեն լինելու վերաբերյալ «Դիվանի» Դ հատորում կա մի այլ ուշագրավ վկայություն ևս։ Ղուկաս կաթողիկոսը թուղթ է գրում Թիֆլիսի առաջնորդ Կարապետ վարդապետին և Սուրբ Աթոռի վեքիլ տեր-Ղազար քահանային, որ Գյանջեցի Սիմեոն վարդապետը կամենում է վերաշինել Օձունի Հովհան Օձնեցու վանքը՝ Հաղբատից ու Սանահնից անկախ։ Նամակում կաթողիկոսը գրում է, թե երբ Սիմեոնն այդ նպատակով ինձ մոտ եկավ, ես հարցրի. կա՞ արդյոք կոնդակ՝ հին վանքից մնացած։ Նա ասաց թե «ոչ ունիմ... Իսկ մեք որովհետև՝ թէ ի լրոյ՝ և թէ զկոնդակս ոմանս երբեմն տեսանելով. այնպէս գիտեմք թէ՝ շէն վանք ի յայդ միջոցսդ՝ Հաղբատ է լեալ և Սանահին, և թեմք իրաքանչիւրոցն կից միմեանց՝ և միշտ կռիւ ի մէջ դոցա, իսկ վանք սրբոյն Յովհաննու Օձնեցւոյն՝ թէ շէ՞ն է լեալ արդեօք՝ թէ ոչ կամ թէ ունեցեա՞լ է զվիճակ ի մէջ այդ երկուց վանիցդ վիճակոցն՝ թե ոչ, չգիտեաք...»[15]։ Վերջում կաթողիկոսը հանձնարարում է. «Ուրեմն՝ ժողովեսցէ զամենայն հնագոյն արս՝ որք ի քաղաքիդ՝ կամ ի թեմսդ գտանին, յիրից թեմիցն ևս, այսինքն սրբոյ Աթոռոյս, և Հաղբատու և Սանահնու, թէ վարդապետք իցեն, թէ Աւագ քահանայք... և թէ այլ քահանայք, և աշխարհական գլխաւոր իշխանք և հնագոյն բանադէտ անձինք։ Բերեալ տացէ և զԱռաջնորդսն Հախպատու՝ Սանահնու և Հաղարծնոյ. և զամենեսեան ի մի վայր գումարեալ՝ քննեսցէ արդարութեամբ թէ վանքն այն յորո՞ւմ ժամանակի է լեալ շէն. և թեմ ունեցեա՞լ է՝ թէ ոչ։ Կամ թէ՝ ինքնագլո՞ւխ վանք է եղեալ, թէ ի ներքոյ իշխանութեան Հաղբատու կամ Սանահնու»[16]։

Նույնը կարելի է ասել և 1799-ական թթ. վերաբերյալ։ «Դիվանի» Դ հատորում կարդում ենք. «Եվ կի Բարմասար սեագլուխքն այնոքիք չունին ինչ ոգտութիւն առ սուրբ վանքն, և զանձինս իւրեանց միայն արածեն, և խռովութիւն ևս յաբուցանեն, վասն որոյ ահա գրեցաք առ Հաղբատու թեմականսն թէ՝ կարգազերծ Դաւիթն և չնչին աբեղայն իւր լուծեալք են ի կարգաց իւրեանց»[17]։

Պարզ է ասված՝ «գրեցինք Հաղբատի թեմականներին, որ Դավիթն ու իր չնչին աբեղան կարգալուծ են արված»։

Գոյություն ունեն առավել ակնառու ու երկբայության տեղիք չտվող այնպիսի փաստաթղթեր, ինչպիսիք են 1763, 1784, 1787, 1795 թթ. Հաղբատի առաջնորդներին, գործակալներին և իշխանավոր անձանց հասցեագրված՝ ժամանակի հոգևոր գործիչների գրագրությունները, Նամակներն ու կոնդակները, որոնցով լի են Մատենադարանում գտնվող Կաթողիկոսական դիվանի թղթապանակները, ինչպես նաև Սիմեոն Երևանցու և Հովսեփ Արղությանի դավթարներում եղած նյութերը, որոնց հրապարակումով[18], կարծում ենք, մեկընդմիշտ

14 Տե՛ս «Դիվան հայոց պատմության», գիրք Դ, Թիֆլիս, 1894, էջ 531—533։
15 Նույն տեղում, գիրք Դ, Թիֆլիս, 1899, էջ 207։
16 Նույն տեղում, էջ 210։
17 Նույն տեղում, էջ 582։
18 Հոդվածի ծավալը թույլ չի տալիս այդ անել հիմա։

վերջ կտրվի Հաղբատի ավեր ու անմարդաբնակ լինելու վերաբերյալ այն կարծիքին, որ հայտնել է Պ. Հակոբյանը։

«1784 թ. ուշ աշնանից,— գրում է Հակոբյանը,— ինչպես նշեցինք, սկսվում է Հաղբատ գյուղի ու վանքի երկրորդ, լիակատար ամայությունը, որ տևում է մինչև դարավերջ» (էջ 218)։

Այդ բանում համոզվելու համար նախ նա փորձում է «ապացուցել», որ Հաղբատի երկրորդ ավերումը տեղի է ունեցել ոչ թե 1786 թ., ինչպես նշում է Հովհաննես Ղրիմեցին, կամ՝ 1785-ին, ինչպես վկայում են վրաց աղբյուրները, այլ 1784 թ.։

Պ. Հակոբյանն իր հոդվածում գրել է. «Մեզանում հաճախ ավելորդ վստահություն է ցուցաբերվում օտար, երբեմն միանգամայն ոչ սխալաշատ աղբյուրների նկատմամբ և արհամարհանք՝ մեր մատենագիրների հանդեպ։ Մարդիկ փոխանակ... հայրենի դիվանները մանրազնին հետախուզելու, դյուրախաբությամբ դուռ են բաց անում օտար վարկածների առաջ և հալած յուղի տեղ ընդունում դրանք՝ առանց լոջորն ստուգելու, քննելու, բաղդատելու»[19], բայց չնայած դրան, ինքը ժամանակակից մի պատմաբանի (Օլգա Պետրովնա Մարկովա) 1966 թ. հրատարակած՝ „Россия, Закавказье и международные отношения в XVIII веке“ գրքի միայն մի քանի էջերից քաղած տվյալների հիման վրա կառկածի տակ է առնում Հովհ. Ղրիմեցուն։ Իր հոդվածում նա գրում է. «Վերջին տարիներս գիտական շրջանառության մեջ են բերվել Ռուսիայի արտաքին հարաբերություններին վերաբերող մի շարք վավերագրեր՝ գրված լեզգիների վերբ ներխուժած ցեղերին, որոնք պարզ ու հստակ մատնանշում են, որ խոսքը 1784 թ. ամառվա մասին է»[20]։

Նախ՝ ի՞նչ ասել է վերջին տարիներս։

Այն վավերագրերը, որոնցից օգտվել է Օ. Պ. Մարկովան և որոնք նկատի ունի Հակոբյանը, ամենևին էլ վերջին տարիներս չէ, որ մտել են գիտական շրջանառության մեջ։ Խոսքը ցարական գնդապետ Ստեփան Դանիելովիչ Բուրնաշևի ու Հերակլ II-ի՝ իշխան Գ. Պոտյոմկինին և Պ. Պոտյոմկինին հասցեագրած գրությունների ու նամակների մասին է, որ ավելի քան 150 տարի հայտնի են ամբողջ աշխարհին և որից օգտվել ու օգտվում են Կովկասով ու նրա ժողովուրդների պատմությամբ զբաղվող բոլոր մասնագետները՝ անցյալներում և այժմ։ Այդ նյութերը սրանից ուղիղ հարյուր տարի առաջ օգտագործել է Պ. Բուտկովն իր հանրահայտ „Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 года“ աշխատության մեջ, Ն. Դուբրովինը՝ իր „История войны и владычества русских на Кавказе“ եռահատոր գրքում։ Այդ նյութերից օգտվել և օգտվում են XVIII դարի վրաց պատմությամբ զբաղվող մասնագետները՝ Յասե Յինցաձեն, Վալերիան Մաչարաձեն, Նիկոլայ Բերձենիշվիլին, մեզանում՝ Լեոն, Մկրտիչ Ներսիսյանը, Աբգար Հովհաննիսյանը, Զավեն Գրիգորյանը և շատ ու շատ ուրիշներ։

Ինչպե՞ս կարելի է այս ամենից հետո գրել «վերջին տարիներս» և կամ միայն Օ. Պ. Մարկովայի հիշյալ աշխատության պատահական նախադասության վրա հենվելով պնդել, թե լեզգիների 1785—1786 թթ. հանրահայտ ար-

---

19 «Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 3, էջ 221։

20 Նույն տեղում, էջ 213։

շավանքը տեղի է ունեցել ավելի վաղ, երբ վերոհիշյալ հեղինակների մոտ հանգամանորեն նկարագրված են լեզգիների այդ արշավանքի կազմակերպման մանրամասները։

Ինչ վերաբերում է Ս. Բուրնաշևի՝ 1784 թվականի հուլիսի 6-ին տված հաղորդագրությանը («Վրաստանի բոլոր ճանապարհները բռնված են, ինչպես վարակ, լեզգիներով», ինչպես և Հերակլ II-ի՝ «Վաղուց է, որ այսպիսի իրաբանցում չէր եղել Վրաստանում» տեղեկությանը, որ թարգմանաբար մեջ է բերել Պ. Հակոբյանը (էջ 213), ապա դրանք խոսում են ոչ թե լեզգիների նոր հարձակման, այլ այդ հարձակման նախորդող շրջանում գոյություն ունեցող իրավիճակի մասին։ Ինքը՝ Մարկովան, բավական հանգամանորեն նկարագրում է 1785—1786 թթ. Կովկասը ոտքի տակ տված լեզգիների, մասնավորապես Ավարայի Օմար խանի ձեռնարկած արշավանքները։ Կարծում ենք, որ Պ. Հակոբյանը աչք է փակել այնտեղ արձանագրված փաստերի առաջ, փաստեր, որ Մարկովան էլ իր հերթին վերցրել է, անշուշտ, ավելի հին աղբյուրներից, օրինակ՝ Նիկոլայ Դուբրովինից, որն էլ իր հերթին՝ Պ. Բուտկովից, որ մանրամասն, օր առ օր նկարագրել է Օմար խանի արշավանքը դեպի Վրաստան։ Ըստ Բուտկովի՝ 1785 թ. սեպտեմբերի 22—23-ին Օմար խանը գրավում է Լոռվա բերդն ու Ախյալան, հոկտեմբերի 31-ին՝ Իմերեթիայի Վախանի ամրոցը, ձմեռում է Ախալցխայում և միայն ապրիլին դուրս գալիս այնտեղից ու, Սևանի վրայով, վերադառնում իր հայրենիքը։ Այս արշավանքների ընթացքում է զոհվում վրաց գրական գործիչ Իսսե Օսեի Բարաթաշվիլին, որ մահվանից մեկ տարի առաջ հիշում է Օմար խանի՝ Ախթալայի շրջանում կատարած ավերածությունների մասին, ակնարկում իր մահը, երևակայորեն պատկերացնում թաղումը, կարծես դգալով, որ հաջորդ տարին ընկնելու է նույն այդ լեզգիների սրից։ Հայտնի է, որ Բարաթաշվիլին լեզգիների գոհն է։ Կարդալով իր եղբոր կազմած «Քրոնիկոնը», և հասնելով 1786 թ., Բարաթաշվիլու եղբայրը՝ Իոանեն, բացականչում է. «Վա՜յ մեզ, էս թվին իմ եղբայրն ընկավ լեզգիների ձեռքից» (მოკუდა ლეკთადან)[21]։

Ի վերջո հրապարակի վրա է Հ. Թումանյանի «Սայաթ-Նովան Դավիթ եպիսկոպոս» խորագիրը կրող զեկուցման մի ծանոթագրությունը, որ արված է Գեորգի XII-ին հասցեագրած Ղուկաս Կարնեցու նամակի առթիվ։ Խոսելով լեզգիների՝ դեպի Լոռի կատարած հիշյալ արշավանքների մասին, Թումանյանը գրում է. «Անշուշտ, կաթողիկոսն ակնարկում է 1785 թ. աշնանը լեզգիների հարձակումը, երբ Ավարի Օմար խանը 71 հազար ընտիր լեռնականներով Կովկասի սարերից իջավ, ոտնատակ տվեց Կախեթը, անցավ Բորչալուն, սեպտեմբերի 20-ին մտավ Լոռու ձորերը, ավերեց ու կողոպտեց գյուղերն և վանքերը և հեռացավ սեպտեմբերի վերջին, երբ Հերակլ թագավորը խոստացավ տարեկան որոշ գումար վճարի նրանց»[22]։

Այս ամենից հետո ինչպե՞ս կարելի է ասել, թե «խոսքը 1784 թվականի մասին է», ինչպե՞ս կարելի է չհավատալ Հովհաննես Զրիմեցուն, որ դեպքերը նկարագրում է ճիշտ այնպես, ինչպես 30 տարի իրենից հետո վերոհիշյալ Պ. Բուտկովը։

---

[21] ქრ. შარաშიძე, ესე ოსეთის „ქრონიკონი". („Известия" института языка, истории и мат. культуры имени Н. Я. Марра, Тбилиси, 1943, XIII, էջ 121—137։ հմմտ. გ. მიქაძე, ძველი ქართული ლიტერატურის კითხვები (ժողովածու), հատ. 2, 1964, էջ 156։

[22] Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. VI, Երևան, 1959, էջ 142։

Օմար խանի հարձակումներից, իրոք, մեծապես տուժում է Հաղբատը։ Մոտ չորս տարի այն գրեթե կիսավեր վիճակում էր, այո՛ չորս տարի և այո՛ գրեթե։ Բնակիչներ կային, ինչ խոսք, չէին կարող չլինել, ուրեմն՝ և՛ հոգևորականներ։ Այլ կերպ լինել չէր կարող։ Եվ այդ որոշակի երևում է Ղրիմեցու մի վկայությունից։ Ասում է «Յամի 1786, յորում բաղմութիւնք Ալանաց կամ լէկղեաց, իբրև բսան հազարաց՝ առաջնորդութեամբ Օմար-խանի իւրանց յարձակեալ յայս նահանգ Հուգարաց... պաշարեցին զայն և առին և զամենայն Յոյնս կոտորեալ ի բերան սրոյ՝ զհայս առ հասարակ ի գերութիւն վարեցին։ Անտի ապա իջեալ՝ մտին ի ձորն Սեաւորդեաց և ի ջանալ նոցա ելանել ի Հաղբատատափ այսր ընդ կիրճն Երամաձորոյ՝ արգելան ի նուացանից բնակչաց Հաղբատայ (Պ. Հակոբյանի ուշադրությունն ենք հրավիրում) և այլոց գիւղականացն... վասն որոյ ուղղակի անցեալ ընդ ձորն՝ գնացին յՕձուն գիւղ, որոյ բնակիչք արդէն խոյս տուեալ կային ամրացեալ յանմատոյց լերինս... Այլ մինչդեռ էին սոքա յՕձուն գիւղ անդր, Հաղբատցիք և ոչ ընդ նոսա անաբեկեալ՝ ի բազմութենէ նոցին՝ խոյս ետուն գիշերայն ի Հաղբատայ և գնացեալ ամրացան յանմատոյց ծործորս լերանց և յանտառս»[23]։

Օմար խանի արշավանքից հետո, հաղբատցիք չորս տարի թափառում են այս ու այն կողմ. նրանց մի մասը, Հերակլի հրամանով, տեղափոխվում է Թիֆլիս, իսկ մյուս մասն, ինչ խոսք, մնում է տեղում։ Հիշենք հենց թեկուզ Թաղիադյանի քահանային, որը 1780-ական թթ. ծառայել էր գյուղում։ Բավական է, որ գյուղի մի որոշ մասն էլ չվեր, մեկ երկու թաղ ավերվեր, պատմիչը այն պիտի ներկայացներ որպես լիակատար ավերածություն։ Այսպես էր բանը և Դավթի առաջնորդության տարիներին։ Այո՛. Դավիթը, այդ շրջանի Հաղբատի անարժան առաջնորդը, գրեթե Հաղբատում չնստեց, բայց ոչ թե այն պատճառով, որ Հաղբատն ավերված է։ այլ որովհետև ինքը՝ Դավիթը, աշխարհիկ հաճույքների սիրահար, թեթևաբարո մեկն էր, որ վանքը լքել ու իր օրերն անց էր կացնում Թիֆլիսում։ Ղուկաս Կարնեցին Հերակլի և մանավանդ նրա որդի Դեորգիի բազում խնդրանքներին անսալով է, որ Իսրայելի փոխարեն Դավթին առաջնորդ կարգեց։ Նրա նպատակն այն էր, որ Դավիթը կենա Հաղբատում և զբաղվի վանքի վերաշինությամբ։ Նույնիսկ նրան եպիսկոպոսական կոչում շնորհեց՝ դարձյալ ի սլատիվ արքայի և նրա որդու։ «Եթե տէր կամեսցի, և յաջողեսցէ, վասն քաղդր և պատուական խաթեր բաղձալոյդ զայդ խնդիրդ ես կատարելոց եմք. միամիտ լեր»։ Եվ այս բոլորից հետո էլ «Դավիթ չվարդապետը... ոչինչ կամեցաւ բարեպէս վարել,— տրտնջում է կաթողիկոսը,— և մինչ լեզկեաց յարուցումն եղև, զվանքն գատարկեալ, եկն յայդր, և ոչ ես հոգայ դառնալ»[24]։

Նշանակո՛ւմ է արդյոք, թե Հաղբատն այդ շրջանում անմարդաբնակ էր և վանքը՝ կործանված։ Իհարկե ո՛չ։ Վանքում հոգևորականներ, սպասավորներ չէին կարող չլինել և կային։ Եվ հենց նույն այդ նամակում էլ կաթողիկոսը հիշում է նրանց. «Գրեցաք առ Հաղբատու քեմականսն, թէ կարգաղերծ Դաւիթն և չնչին աբեղայն իւր լուծեալք են ի կարգաց իւրեանց. և խնդրեցաք զի քանի քահանայք և իշխանք պայցեն ի սուրբ Աթոռս, որ նոքօք հանդերձ ի յառաջնորդ կոչեցեալ Դաւթէն առցուք զհաշիւսն այսքան ամաց արտադրութեանց սրբոց

23 «Յով. Ղրիմեցւոյ Պատմութիւն...», էջ 127—128։
24 «Դիվան», գիրք Դ, էջ 582։

վանացն»[25]։ Նույն թվականին և նույն հուլիս ամսին արքայազն Գեորգիին գրած նամակում էլ նա հիշում է հաղրատցիներին. «Որոց բողոքն մինչ է հաս առ մեզ, հարկ եղաւ զի յառաջնորդ կոչեցելոյն պահանջեսցուք զհաշիւս արդեանցն առեցելոց յանուն սրբոյ վանացն... Ուստի՝ ահա թուղթ գրեցաք ի յօրհնեալ քաղաքդ առ Հախպատու բեմ քահանայս և ժողովուրդսն, և խնդրեցաք ի նուցանէ դալ ի սուրբ Աթոռս»[26] և այլն և այլն։

Այս է իրողությունը, և այս ամենը հերքել հնարավոր չէ։

Այժմ մի երկու խոսք Սայաթ-Նովայի մասին։

Անհրաժեշտ է հարդանքով ու երկյուղածությամբ քննել նրա անվան հետ կապված յուրաքանչյուր մանրուք՝ տեղի չտալու համար որևէ հնարավոր թյուրիմացության։ Այն բանից հետո, երբ համարյա բոլոր սայաթնովագետները՝ սկսած Ախվերդյանից, հայ-վրացական բազմաթիվ ու բազմապիսի աղբյուրներից քաղած նյութերի հիման վրա գտնում են, որ Սայաթ-Նովան իր կյանքի վերջին տասնամյակներն անց է կացրել Հաղբատում, Պ. Հակոբյանը կասկածի տակ է առնում այդ իրողությունը։

Եկեք հետևենք հենց իր՝ Պ. Հակոբյանի մտքի ընթացքին ու դրույթներին։

Պ. Հակոբյանը գրում է. «Անուղղակի տվյալներից կռահվում է նաև, որ Դավթի նախորդ Իսրայել կաթողիկոսը, տակավին Հաղբատավանից առաջնորդ, նույն 1783 թ. Տիֆլիսում էր։ Այդտեղ էր հաստատվել նաև Սանահնի վանքի առաջնորդը։ Նրանք, հարկավ, միայնակ չէին, այս ստորադաս վանականների շքախմբով։ Հակված ենք կարծելու, որ Սայաթ-Նովան էլ նրանց հետ պիտի լիներ։ Մանավանդ որ ըստ անտսուարկելի վավերագրերի, 1784 թ. սկզբներին Տփղիսում ապրում էր վեղար կրող Տեր-Ստեփան անունով մի հոգևորական, որպիսին Սայաթ-Նովան էր այն ժամանակ» (էջ 218)։

«Անուղղակի տվյալներից կռահվում է նաև, որ Դավթի նախորդ Իսրայել կաթողիկոսը... Տփղիսում էր» պնդման համար ոչ թե անառարկելի, այլև առարկելի տվյալ էլ գոյություն չունի։ Իսրայելը իր առաջնորդության 4 տարիների ընթացքում, իհարկե, մեկ-երկու օրով կարող էր մեկնել Թիֆլիս, բայց նա մշտապես բնակվել ու գործել է Հաղբատավանքում, և այդ 4 տարիների մեջ, ինչպես վերը տեսանք, կատարել է շինարարական մեծ աշխատանք։ Ուրիշ է Սանահնի Աբրահամը, որ Հաղբատի հետագա առաջնորդ Դավթի նման ապիկար վարքի տեր մեկն էր և իր ժամանակի մեծ մասն անց էր կացնում Թիֆլիսում։ Պաշտոնավայրից հեռանալն ու մի այլ տեղում ժամանակավոր ծառայելը ինքնին ոչինչ չի նշանակում։ Այդպես էլ Հաղբատի առաջնորդների Թիֆլիս տեղափոխվելը չէր կարող նշանակել, թե հոգևոր կյանքը դադարել էր Հաղբատում։ Հայտնի է, օրինակ, որ ոչ միայն թեմերի առաջնորդները, այլև Ներսես Աշտարակեցին երկար տարիներ բնակվել է Թիֆլիսում, Աղվանից կաթողիկոսները Դանձասարից տեղափոխվել էին Հաղբատ, Գաբրիել Այվազովսկին (որ Թիֆլիսի առաջնորդ էր և միաժամանակ էջմիածնի Գևորգյան ճեմարանի տնօրենը) բնակություն էր հաստատել էջմիածնում։ Իսրայելին Աբրահամի հետ Թիֆլիս տեղափոխելով, Պ. Հակոբյանը ուրիշ նպատակ չի հետապնդել, քան նրանց հետ Հաղբատից Թիֆլիս «տանելու» նաև Սայաթ-Նովային. «Հակված ենք կարծելու, որ Սայաթ-Նովան էլ նրանց հետ պիտի լիներ»։ Ինչո՞ւ,

25 Նույն տեղում։
26 Նույն տեղում, էջ 580։

որովհետև «1784 թ. սկզբնելոին Տփղիսում ապրում էր վեղար կրող Տեր-Ստեփան անունով մի հոգևորական, որպիսին Սայաթ-Նովան էր այն ժամանակ»։ Բայց տեսնելով, որ Թիֆլիսում եղած Ստեփանոսների թիվը այդ տարիներին խիստ շատ էր, ավելացնում է. «Ստեփան(ոս) անունով շատերը կային, բայց այդ շատերի մեջ 1784 թ միայն մեկն է, որ ուներ վեղար, այսինքն՝ այրի քահանայությունից վանականների դասն էր անցել և անգամ մեծարվում էր ամենայն Հայոց կաթողիկոսից։ Այդ անձը հենց Սայաթ-Նովա—Տեր Ստեփանն էր» (էջ 218)։ Եղա՞վ...

Առաջ անցնենք։

Ուշադրության արժանի հաջորդ խնդիրը վերաբերում է Սայաթ-Նովայի կյանքի վերջին տասնամյակին։

Հայտնի ավանդության համաձայն, 1795 թ., երբ Աղա-Մահմեդ խանը արշավում է Թիֆլիսի վրա, Սայաթ-Նովան շտապով Հաղբատից գալիս է Թիֆլիս՝ իր որդիներին Մոդոկ փոխադրելու համար։ Ավանդությունն այս ժամանակին է վերագրում և Սայաթ-Նովայի սպանությունը։ Մինչդեռ ըստ Հակոբյանի նրա որդիները (Օհանը և Մելիքսեթը) դրանից մի ամբողջ տասնամյակ առաջ՝ 1785 թ. արդեն վաճառականներ էին Ղզլարում։

Առանց հաշվի առնելու, որ սա ավանդություն է, կամ տարեց մարդկանց հիշողության հիման վրա սարքված վարկած, Պ. Հակոբյանը գրում է. «Այս ևս մի լուրջ կռվան է հաստատելու, որ Սայաթ-Նովան... Հաղբատից Տփղիս էր եկել իսկապես 1784 թ. կամ նախորդ տարին...» (էջ 219), «Կարելի է անառարկելիորեն հաստատված համարել, որ Սայաթ-Նովան Հաղբատի վանքում կրոնավորել կարող էր միայն 1778—84 թթ. ժամանակամիջոցում» (էջ 224)։ Հետաքրքիր է, թե ինչո՞ւ։ Որովհետև, ըստ Հակոբյանի, Սայաթ-Նովան Հաղբատից հեռացել է ոչ թե 1795 թ., այլ՝ տասնմեկ տարի դրանից առաջ, 1784 թ.։ Ինչո՞ւ։ Որովհետև «անառարկելի վավերագրերից (դարձյալ՝ անառարկելի...) հայտնի է, որ Սայաթ-Նովայի որդիքը ... 1785 թ. արդեն վաճառականներ էին Ղզլարում» (էջ 219)։ Եթե այդպես է, և եթե Սայաթ-Նովան էլ Հաղբատից եկել էր իր որդիներին Ղզլար ճանապարհելու, կնշանակի վերջինս Հաղբատից Թիֆլիս կարող էր գալ՝ ըստ Հակոբյանի, միմիայն մինչև 1784 թ.։ «Եթե անգամ Իոանա Խելաշվիլու հնարավոր այցելությունը Հաղբատ տեղի ունեցած լիներ վերջին տարում,— գրում է նա,— ապա այդ ժամանակ ամենաշատը տասներեքամյա երեխա պիտի լիներ նա, տարիք, որ բոլորովին չի համապատասխանում Խելաշվիլուն վստահված պաշտոնին ու աստիճանին» (էջ 224)։

Ինչպես տեսնում ենք, Պ. Հակոբյանը այս անգամ էլ դատաստան է տեսնում վրաց գրականության խոշոր հուշարձաններից մեկի՝ «Կալմասոբայի» հետ։ «...մեր համոզմամբ,— գրում է նա,— մտացածին է «Կալմասոբայի» հիշված դրվագը, ըստ որի, որպես թե 1801 թ... Սայաթ-Նովան... հանդիպել է... Իոանա Խելաշվիլու հետ» (էջ 222)։

«Կալմասոբայի» նկատմամբ բացասարար տրամադրված բանասերը ամենից առաջ պետք է լավ գիտենա այդ գործը, հիմնավոր տեղեկություն ունենա նրա հեղինակի ու ժամանակաշրջանի մասին, ծանոթ լինի այդ երկի շուրջ ստեղծված գրականությանը։

«Կալմասոբան», վրաց գրականության և մշակութային կյանքի եռահատոր այդ հանրագիտարանը, ընդգրկում է պատմական, աշխարհագրական, փիլի-

սովետական, բնագիտական, աստվածաբանական և բազում այլ բնագավառների վերաբերյալ ամենաբազմապիսի նյութեր։ Նրա հեղինակը՝ Իոան Բագրատիոնը, Վրաստանի վերջին թագավոր Գեորգի XII-ի որդին էր՝ Դավիթ և Բագրատ Բագրատիոնների եղբայրը, իր ժամանակի ամենազարգացած ու գիտուն մարդկանցից մեկը։ «Կալմասոբան» նա գրել է Պետերբուրգում, 1813—1828 թթ. մեջ՝ Սայաթ-Նովայի մահվանից 20—25 տարի հետո։ Անցյալի և ժամանակակից վրաց գործիչները շատ բարձր կարծիք ունեն «Կալմասոբայի» մասին և պատմականորեն ճշմարիտ ու հավաստի են դիտում նրանում ընդգրկված նյութը։

«Կալմասոբան» գրված է յուրօրինակ մի ձևով։ Կիսամեմուարային բնույթի այդ երկում պատմողը և գործող անձը ոչ թե ինքը՝ հեղինակն է, այլ նրա դասընկեր ու բարեկամ Իոանե Խելաշվիլին, որի հետ նա ուսանել է Թելավի հոգևոր սեմինարիայում։ Իոանեին հեղինակը ման է ածում համարյա ամբողջ Վրաստանով մեկ՝ Կախեթի, Իմերեթի, Սոմխիթ, Բորչալու, բերում է մինչև Էջմիածին, և իր ճանապարհին ընկած բոլոր նշանավոր մարդկանց հետ հանդիպեցնելիս՝ հարցապրույց կազմակերպում նրանց միջև։ Գրական այս «մեթոդը» հնարավորություն է ընձեռել հեղինակին արտահայտելու իր մտքերն ու հույզերը այս կամ այն գործչի կամ երևույթի նկատմամբ։

Ժամանակները բծախնդրորեն ճիշտ նշված չեն «Կալմասոբայում», բայց փաստերն ինքնին պատմականորեն հավաստի են։ Գրքում չի ասված, թե ո՞ր թվականին և ամսի հիշատակի՞ն է Խելաշվիլին այցելել Հաղբատ, բայց որ Խելաշվիլին և Սայաթ-Նովան հանդիպել են և կամ կարող էին հանդիպած լինել՝ պատմականորեն հավաստի է։ Հնարավոր է անդամ, որ Խելաշվիլին Սայաթ-Նովային հանդիպած լինի ոչ այդ կերպ, և նրանց միջև տեղի ունեցած իրական զրույցն էլ փոքր-ինչ այլ բովանդակություն ունենար, քան այստեղ է։ Կարելի է կարծել անդամ, որ Սայաթ-Նովային հանդիպել, կամ զրուցել է ոչ թե Խելաշվիլին, այլ հեղինակը՝ Իոանե Բագրատիոնը, և այդ զրույցը վերագրել իր հերոսին։ Բայց որ իր, կամ իր հերոսի հանդիպումը, մոտավոր այդ բովանդակությամբ, տեղի է ունեցել, անհերքելի է։ Գուցե այստեղ Պ. Հակոբյանը հիշեր Պ. Մուրադյանի տողերը, որոնց արդեն նա չէր կարող հանդիպած չլինել։ Խոսելով Իոանե Խելաշվիլու և Սայաթ-Նովայի այդ հանդիպման մասին Հաղբատում, Մուրադյանը գրում է.

«Այս հաղորդումը կասկած չի հարուցում, քանի որ Իոան Բագրատիոնը եղել է նկարագրվող դեպքերի ժամանակակիցը, իսկ երբեմն էլ՝ նրանց անմիջական մասնակիցը»[27]։

«Կալմասորայի» դեմ իր առարկությունները Պ. Հակոբյանը փորձում է հիմնավորել նրա հեղինակի ծննդյան թվականի վերաբերյալ դիտողությամբ. «Զմոռանանք և մի ուրիշ հանգամանք,— գրում է նա,— արքայազնը ծնվել է 1772 թ.» (էջ 224) և նշում է Լ. Մելիքսեթ-բեկի «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» գիրքը, առանց սկզբնաղբյուրներով ստուգելու և պարզելու, թե իսկապես Ե՞րբ է ծնվել վրաց թագաժառանգը։

Իոանե Բագրատիոնը ծնվել է ոչ թե 1772 թ., ինչպես նշում են պրոֆ. Լ. Մելիքսեթ-բեկն ու Պ. Մուրադյանը, այլ՝ 1768 թ. և մեռել է ոչ թե 1839 թ.

---

[27] П. Мурадян. Армяно-грузинские литературные взаимоотношения в XVIII веке, Ереван, 1966, էջ 27։

(Լ. Մելիքսեթ-բեկ) կամ 1836 թ. (Պ. Մուրադյան), այլ՝ 1830 թ. փետրվարի 15-ին, մահվանից առաջ հիշելով անգամ, որ ինքն արդեն հասել է իր կյանքի 62 տարվան։ Եթե 1830 թ. հանենք 62, կստացվի 1768, ինչպես վկայում են վրաց գրականության պատմության վերջին ձեռնարկները[28]։ Վերջապես կա իր՝ արքայազնի ձեռագիրը, որ այժմ պահվում է Կ. Կեկելիձեի անվան Ձեռագրերի ինստիտուտում, հետևյալ համարների տակ. S—53—74, S—53—75, H—22—70, H—21—34 և H—21—53։

Սայաթ-Նովային 1795 թ. փոխարեն 1784 թ. Հաղբատից Թիֆլիս բերելով, այժմ էլ քմահաճորեն չորս տարով արքայազնին ջահելացնելով, Պ. Հակոբյանը հետապնդում է միայն մեկ նպատակ՝ ընդգծել վրաց երիտասարդ սարկավագի և հայ տարեց վարդապետի միջև եղած հասակի տարբերությունը։ Դեպքը 1795 թ. ետ է տարվում 1784, որպեսզի 11 տարով պակաս հաշվվի արքայազնի տարիքը և դեռ չորս տարով էլ արքայազնին լրացուցիչ ջահելացնելով՝ 1768 թ. փոխարեն նրան ծնված համարելով 1772 թ., Պ. Հակոբյանը գրում է. «Այդ տարիքի մի մանկան հետ վաթսունհինգամյա մի վարդապետ չէր կարող լուրջ հարցերի շուրջ կրուցել...»։ Այս մեթոդով կարելի է Խելաշվիլուն դարձնել ծծկեր երեխա և նույնիսկ տակավին լույս աշխարհ չեկած։ Նա այդ էլ է անում, գրելով. «Վկայակոչված նրույցը, եթե բացարձակ շինծու չէ, ապա, պիտի կարծել, արձագանք է վաղ շրջանի իրողության, տեղի ունեցած Կախո քարվանսարայում, Սայաթ-Նովայի քահանայության առաջին տարիներին, 1765—1766 թթ. մինչև երբ աշխարհ չէին եկել ո՛չ Խելաշվիլին և ո՛չ էլ արքայազնը» (էջ 223)։

Իրականում Խելաշվիլին Սայաթ-Նովային հանդիպած պետք է լինի 1790-ական թթ., երբ Իոանեն գտնվում էր պատանեկությունից երիտասարդության անցնելու շրջանում, որ վրացիք արտահայտում են ყმაწვილი բառով, ինչպես «Կալմասոբայում» է։

Պ. Հակոբյանի ձեռքի տակ եղել է «Կալմասոբայի» այդ հատվածի հայերեն երկու թարգմանություն՝ պրոֆ. Լ. Մելիքսեթ-բեկի և Պ. Մուրադյանի։ Շրջանցելով 1963 թ. լույս տեսած Պ. Մուրադյանի «Սայաթ-Նովան ըստ վրացական աղբյուրների» գրքույկը, Պ. Հակոբյանն օգտվել է 1955 թ. տպագրված Լ. Մելիքսեթ-բեկի՝ «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» գրքից, մոռանալով, որ վերջին հրատարակությունը սովորաբար ավելի կատարյալ է լինում, քան նախորդը։ Գիտե անշուշտ, բայց այս անգամ իրեն ավելի ձեռնտու է հին հրատարակությունը, որովհետև այնտեղ մի այսպիսի մանրուք կա։

Իոանեին իր խցում հյուրընկալելիս վարդապետը հյուրասիրում է նրան, ճաշի հետ միասին առաջարկելով և գինի։ Այդ հատվածի ճիշտ թարգմանությունն այսպես է. «Վարդապետը Իոանին ճաշ հրամցրեց, և սկսեցին ուտել։ Միաժամանակ լավ գինի էլ հյուրասիրեց Իոանին, և ինքն էլ լավ էր խմում։ Այդ ժամանակ (պատից) իջեցրեց չոնգուրը և սկսեց նվագել, և ասա (կատարեց) հաջորդեց այս երգը»։

Թարգմանությունը կատարյալ չէ թե՛ պրոֆ. Մելիքսեթ-բեկի, և թե՛ Մուրադյանի մոտ. Պ. Մուրադյանն սխալ է թարգմանել առաջին նախադասության

[28] Ս. Մ ի ք ա ձ ե, ქართული ლიტერატურის კითხვები (XIII), თბილისი, 1965, էջ 53; „ქართული ლიტერატურის ისტორია (XIII—XVIII)“, თბილისი, 1966, հ. II, էջ 705։

վերջին պարբերությունը՝ «և սկսեց ուտել»[29]։ Ո՞վ է ուտողը՝ Իոաննն, թե՞ Սայաթ-Նովան։ Մինչդեռ բնագրում հոդնակր է՝ «նվ սկսեցին ուտել» դաոՊՏՅՅՏ ՅԱՄԱ և ոչ թե՝ դաոՊՏՅՅ ՅԱՄԱ։ «Ինքն էլ լավ խմում էր» տոտոնաՉ ՅԱՐՅԱԴ ՇԵՅՅՉԱ պարբերությունը Լ. Մելիքսեթ-բեկը թարգմանել է՝ «և ինքն էլ լավ կոնծեց»[30], մինչդեռ Սայաթ-Նովան հարբեցողի մեկը չէր և Իոաննի հետ խմել է միանգամայն չափավոր՝ ՅԱՐՅԱԴ ՇԵՅՅՉԱ։ Վերջին նախադասությունն այսպես է. «[պատից] իջեցրեց չոնգուրը» կամ «[պատից] վեր առավ չոնգուրը» (ՅՈԴԼՈՈԴԱՆ) ՀԱՄՈՅՈՐ ՈՈՆԳՅՈՐՈ և սկսեց նվագել։ Պարզ գրված է չոնգուրը (ՀՈՆԳՅՈՐՈ). Մինչդեռ Լ. Մելիքսեթ-բեկը թարգմանում է՝ «վեր բերեց սաղը»[31] և միայն փակագծում դնում («չոնգուրը»)։ Այստեղից էլ Պ. Հակոբյանը անում է իր հերթական եզրակացությունը. «Միջանկյալ նկատենք, որ Սայաթ-Նովան, իր իսկ վկայությամբ, սովորել ու նվագում էր՝ «քամանչեն, ու չոնգուրն, ու տամբուրեն»։ Բայց ոչ սաղ, և, բացի դրանից, սաղի կամ չոնգուրի հայտնությունը հայոց վանքում խիստ կասկածելի է, բայց առաջ գնանք» (էջ 222). Ու առաջ է գնում, խոսք բաց անելով այս անգամ ավելի լուրջ խնդրի վրա. «Այնուհետև «Կալմասաբոյի» հեղինակը մեջ է բերում երգը՝ իբր թե Սայաթ-Նովայի ասած, որն իրականում երկու հակասական տարբերակ ունի» (էջ 222)։ «Կալմասոբայում» գրի առած երգի համար երբեք չի կարելի ասել «իբր թե Սայաթ-Նովայի ասած», դա վիրավորանք է գրական այդ խոշոր հուշարձանի և մանավանդ նրա հեղինակի հասցեին։ Փոխանակ շնորհակալ լինելու, որ վրացի վանականը առիթը բաց չի թողել, գրի առել ու մեզ է հասցրել մեր մեծ աշուղի շատ ուշագրավ երգերից մեկը, Պ. Հակոբյանը առանց հիմնավոր պատճառաբանության կասկածի տակ է դնում պատմական իրողությունը։

Ո՞վ կարող էր և ուզում ինչի՞ պետք է նստեր ու, Սայաթ-Նովայի փոխարեն, նրա կյանքի անցած ուղին ու ներկա վիճակը այնքան վառ գույներով պատկերող այս անզուգական երգը հորիներ։ Այն դեպքում մենք գործ պիտի ունենայինք մի նոր Սայաթ-Նովայի հետ։ Իսկ մի ուրիշ Սայաթ-Նովա կարծեմ չկա։ Խոսելով այդ նույն երգի մասին, Մ. Հասրաթյանը գրում է. «Սա գրված է անշուշտ Հաղբատում, երբ արդեն կինը մեռել էր (1768) և որոշ ժամանակից հետո կարգվելով վարդապետ, Զաքաթալայի Կախի ավանից... փոխադրում են Հաղբատի նշանավոր վանքը։ Այստեղ դրսևորվում են անցյալում բուռն կյանք ունեցած երգչի լավ օրերի հիշողությունները և գրելու ժամանակի մռայլ վիճակի ողբը, գրված հեռվից («Հիմա այնտեղ...»), առանց կոթի, առանց անմիջական բողոքի»[32]։

Իմ խիղճ գրլուխ, թիգիդ էս ինչ պատահից,
Վուիչ աշխարում ծաղր ու տընազ քի պատից.
Լուրոր փախար, էնթի բախտըտ սոթ տըվից
Վիրշումն էլ տի՛ս, թե վո՞ւնց թեգովլաթ էլար[33],
Դե էլ յիս ո՞ւմ միզ դընիմ, ինչի՞ց էլավ.
Էս ամենըն հենց իմ էս խի՛լքից էլավ...

29 Պ. Մ. Մուրադյան, Սայաթ-Նովան ըստ վրացական աղբյուրների, Երևան, 1963. էջ 93։

30 Լ. Մելիքսեթ-բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. Գ, Երևան, 1955, էջ 246։

31 Սույն տեղում։

32 «Սայաթ-Նովա», էջ 263—264։

33 Մեզ թվում է, թե երգի առաջին տան վերջին բառը «էլավ» պետք է լինի։

Այս երգի մասին Պ. Հակոբյանն ասում է, թե «իրականում երկու հակասական տարբերակ ունիս։ Ինչո՞վ են այդ տարբերակները հակասական, չի հասկացվում։ Դրանք պարզապես տարբերակներ են, որոնց «համադրումից» Մ. Հասրաթյանն ստեղծել է երգի ամբողջական տեքստը։

Գալով Իոանեի և Սայաթ-Նովայի զրույցին, ուր դարձյալ անսովոր բաներ է տեսնում Հակոբյանը, ասես այստեղ էլ՝ բացի նրանից, որ Իոանեն առհասարակ փոքր-ինչ անմիջական ու ինքնավստահ անձ է, անսովոր ոչինչ չկա։ Ոչ միայն Սայաթ-Նովայի, նախորդ օրը նա նույնիսկ իշխան Սողոմոն Արղության-Երկայնաբազուկի հետ կրուցում էր նույնքան հանդուգն։ Ահավասիկ մի դրվագ այդ զրույցից.

«Իոանե— Ովքե՞ր են ձեր ընկերներն ու օգնականները։

Սոլոմոն— Սարդարը, մելիքը, ամիլախվարին...

Իոանե— Ցուռնա-նազարայից զատ՝ ձեզ էլ ոչինչ չի պակասում։

Սոլոմոն— Վիրավորո՞ւմ ես այդ խոսքով արդյոք։

Իոանե— Ո՛չ։

Սոլոմոն— Հապա ինչպե՞ս ես դատում։

Իոանե— Մի օր այլևս տերեր չեն լինի և ոչ էլ դուք կլինեք... Դուք այստեղի հանքերի մինքաշ եք ու վերահսկող. գիտե՞ք, արդյոք, այս հանքերի արհեստը...

Սոլոմոն— Մագանչի հո չեմ, որ գիտենամ։

Իոանե— Վա՛յ իմ գլխին, դատարկ անուն ես ունեցել...» և այլն։

Այդպիսին է և հանդիպումը բանաստեղծ Պետրե Լարաձեի հետ։

Նույնն է և Սայաթ-Նովայի հատվածում։ Երբ նա ավարտում է երգը, Իոանեն խիստ ցավ է զգում, որ այսպիսի մարդուն վանք են նետել։ Ասում է. «Հայր, կուսակրոն եք, ձախ չգնաք», վարդապետը թե՝ «երբ քո հասակին էի, սովորաբար և ձախ էի հակվում, և աջ»։

Իոանե— Վա՛յ ինձ. դուռ համար եք ողբում։

Վարդապետ— Դրա համար էլ եմ ողբում, քեզ համար էլ, որ այդպես երիտասարդ, հոգևորական ես ձեռնադրվել»[34]։

Ինչպես կարելի է տեսնել, այս զրույցի մեջ ոչինչ անպատշաճ չէ։ Քսանքառանհինգամյա Իոանեն Սայաթ-Նովայի հետ խոսում է մեծ հարգանքով՝ հոգևակի, իսկ Սայաթ-Նովան, որպես կանոն, նրան պատասխանում է եղակի։ Ոնավ չի զգացվում, թե «...նա զգաստության է կոչում Սայաթ-Նովային...» (էջ 223), կամ՝ «փոքր անց կրկին խրատում» (էջ 223), ինչպես չափազանցում է Պ. Հակոբյանը։

Ճիշտ է, Սայաթ-Նովան վարդապետ էր, իսկ Իոանեն ընդամենը սարկավագ, բայց ով է ասել, թե սարկավագն իրավունք չպետք է վերապահեր իրեն ազատորեն զրուցելու վարդապետի հետ։ Սարկավագ էլ կա, սարկավագ էլ։ Սարկավագ էր նաև միջնադարի մեր ամենախոշոր մտածողներից մեկը, հենց Հաղբատում թաղված Հովհաննես Իմաստասերը։ Սարկավագներ էին նաև Սեսրոպ Թաղիադյանը, նշանավոր բանաստեղծ Գալուստ Տեր-Մկրտչյանը, իսկ Խաչատուր Աբովյանը նույնիսկ կիսասարկավագ էր և Մ. Նալբանդյանն էլ՝ դպիր։

---

[34] Царевич Иоанн, Калмасоба, Тбилиси, 1915, էջ 111—114։

Ինչո՞ւ չպիտի կարծել, որ 20—25-ամյա Խելաշվիլին էլ մի այդպիսի ուսյալ երիտասարդ էր, որ հետագայում ավարտում է Պետերբուրգի՝ Ալեքսանդր Նիվսկու անվան ակադեմիան։ Այլապես նրան չէին էլ վստահի եկեղեցական հարկերի գանձման պատասխանատու աշխատանքը՝ Կալմասությունքը։ Եվ եթե «Կալմասոբայում» պգացվում է պատշաճության ու հարգալից վերաբերմունքի պակաս այս կամ այն գործչի հանդեպ, ապա դա պետք է բացատրել երկի ժանրով։ Գիտական և ճանաչողական վիթխարի արժեքի հետ միասին, «Կալմասոբան», որի իսկական վերնագիրը, ի միջի այլոց, ոչ թե «Կալմասոբա» է, այլ՝ Խումարսծավլա ԽՈՒՄԱՐՍԾԱՎԼԱ (այս վերնագրով է հրատարակել «Կալմասորան» նրա առաջին հրատարակիչ Դմիտրե Բաքրաձեն՝ 1863 թ., որ հայերեն կարելի է թարգմանել մոտավորապես այս կերպ՝ ուսուցում կատակով), գրված է որոշ անհոգ ու զվարճալի ոճով։ Իոանե Խելաշվիլուն արքայազնը երբեմն ծանր կացության մեջ է դնում՝ անակնկալ վիճակներ ստեղծելով նրա շուրջ։ Իոանե Խելաշվիլին եղբորը գրած մի նամակում մինչև իսկ դժգոհություն է հայտնել իր հետ այդպես վարվելու համար։ Գալով ժամանակագրությանը, արդեն նշել ենք, որ արքայազնը այս հարցում ևս առաջնորդվել է գեղարվեստական սկզբունքներով. «Կալմասոբայում» հավաստի թիվ ու ժամանակագրություն չկա, թեև այն գրված է օրագրի ձևով, բայց այդ օրերը ևս ստույգ ժամանակագրություն չունեն։ Կիրակի՝ օր տասներորդ՝ ՁՅՈՅՈ կամ պարզապես հաջորդ օր՝ ԴԸՅ ՇԻՄԴԶՈՄԱ։ Այստեղից էլ Իոանկ Խելաշվիլու և Սայաթ-Նովայի հանդիպման ժամանակվա անճշտությունը։ Սողոմոն Արղությանի հետ զրուցելիս Իոանեն ակնարկում է, որ Հերակլը (մահ. 1798 թ.) իր ժամանակին բավական բարյացակամ էր Արղությանների հանդեպ, ինչպես այժմ Գեորգի XII-ը (1798—1801)։ Ստացվում է այնպես, որ կարծես զրույցը տեղի է ունեցել Հերակլի մահվանից հետո, Գեորգի թագավորի օրոք, ու հետևապես Սայաթ-Նովան կենդանի է եղել 1795 թ. հետո։ Այս անախրոնիզմի հիմքում ընկած պետք է լինի կամ Սայաթ-Նովայի մահվան վերաբերյալ գոյություն ունեցող վրացական վարկածը (Պլատոն Իոսելիանու կարծիքով Սայաթ-Նովան մահացել է 1801 թ.) և կամ ժամանակագրության հանդեպ հեղինակի ցուցաբերած քմահաճ վերաբերմունքը։

Թերևս «Կալմասոբայի» հեղինակը գիտակցաբար է փոխել ժամանակները՝ հավաստելու համար, ասենք, վրացական վարկածը և կամ տարիներ հետո հիշողությունն է դավաճանել։ Կարող էր այստեղ դիտավորությունն էլ տեղ գտնել, ինչպես այդ «պատահել է» իր մեծ նախորդի՝ Արչիլ Բագրատիոնի հետ, որը իր՝ «Թեյմուրազի և Ռուսթավելու վեճը» (ᲒᲐᲛᲝᲠᲬᲚᲔᲑᲐ თეიმურაზისა და როს თველისა) պոեմում Ռուսթավելուն պրկել է իր ժամանակաշրջանից և բերել XVII դար։ «Կալմասոբան» այս տեսակետից այնքան էլ չի զանազանվում «Արչիլիանիից»։ Ճիշտ է, «Արչիլիանին» կիսապատմական, բայց գրեթե լիովին գեղարվեստական ստեղծագործություն է, իսկ «Կալմասոբան» գրեթե պատմական և փոքր-ինչ գեղարվեստական, բայց բոլոր դեպքերում էլ մենք գործ ունենք հեղինակների անկաշկանդ ստեղծագործական գործունեության հետ, որով ընդգծվել է խզումը գեղարվեստական և պատմական ճշմարտության միջև։

Ինչպես Խելաշվիլու և Սայաթ-Նովայի զրույցի, այնպես էլ վերջինիս կատարած երգի բովանդակությունը կասկած չեն թողնում, որ երևույթը մտացածին չէ, իսկ Սանահնի և Հաղբատավանքի վերաբերյալ Խելաշվիլու վկայած

մանրամասները (վանքի 40 խորան-աղոթարանների մասին), որի վրա առաջինը ուշադրություն է հրավիրել պրոֆ. Լ. Մելիքսեթ-բեկը, զորավոր ապացույց են վրաց սարկավագի այդ վայրերում եղած լինելու անհերքելիության։

Այսպիսով, որևէ հիմք չկա ժխտելու Սայաթ-Նովայի կյանքի հաղբատյան շրջանը, որ հայտնի է մեզ նրա կյանքով ու կենսագրությամբ զբաղվող բանաստեղծների, հայկական ժողովրդական ավանդությունների և հայերեն ու օտար բազմաթիվ և բազմապիսի աղբյուրների վկայություններից։

ОБ АХПАТСКОМ ПЕРИОДЕ ЖИЗНИ САЯТ-НОВЫ

Ш. С. ГРИГОРЯН

(Резюме)

Существует мнение о том, что Саят-Нова последние 25 лет своей жизни провел в Ахпатском монастыре, причем принято считать, что ахпатский период его жизни является весьма вероятным предположением.

Несмотря на это давно утвердившееся убеждение, доктор филологических наук П. Акопян на основании якобы достоверных данных утверждает, что Ахпатский монастырь с 1749 по 1799 гг. (за исключением 1778—1784 гг.) из-за постоянных нашествий турок и лезгин фактически не функционировал, а духовенство и окрестное население было вынуждено покинуть свои очаги. Он считает, что если даже допустить, что Саят-Нова был служителем монастыря, то это могло иметь место только в период с 1778 по 1784 гг., после чего поэт вновь вернулся в Тифлис, где и жил до своей трагической гибели. П. Акопян ставит под сомнение также свидетельства выдающегося памятника грузинской литературы «Калмасоба», обнаруживая в ней «явные анахронизмы»; по его мнению, не внушает доверия, в частности, встреча Саят-Новы с молодым грузинским священником Хелашвили (см. «Историко-филологический журнал», 1969, № 3).

На основании анализа ряда историко-литературных и архивных материалов автор оспаривает справедливость взглядов П. Акопяна относительно ахпатского периода жизни Саят-Новы.